ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 292-Ա

«12» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի թիվ 32-Ա որոշումը՝

Որոշում եմ՝

1. 2024 թվականի ապրիլի 19-ին, ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Մրցույթի անցկացումից մեկ ամիս առաջ «Առավոտ» օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am, Շիրակի մարզպետարանի և Ախուրյանի համայնքապետարանի պաշտոնական կայք էջերում հրապարակել հայտարարություն՝ մրցույթի անցկացման օրվա, տեղի, ժամի, հողամասերի գտնվելու վայրի, չափերի, կադաստրային ծածկագրերի, մեկնարկային գների, նախավճարների չափի, քայլերի չափի, օգտագործման նպատակի, ճանապարհների առկայության, հողերի որակական հատկանիշների և հողամասերի նկատմամբ սահմանափակումների մասին՝ համաձայն հավելված 2-ի:

3.Մրցույթը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 29-ի թիվ 137-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

12 մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

**Հավելված 1**

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2024 թվականի Մարտի 12-ի թիվ 292-Ա որոշման**

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի կադաստրային ծածկագիրը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողի որակական հատկանիշը | | Օգտագործման տրամադրման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը | Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հողի կարգ | Ջրովի/ անջրդի | | | |
| 1 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0116-0039-0001 | վարելահող | 0,17990 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 5000 |
| 2 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0116-0039-0002 | վարելահող | 0,12005 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 4000 |
| 3 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0116-0039-0003 | վարելահող | 0,09712 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 4000 |
| 4 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0116-0039-0004 | վարելահող | 0,10177 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 4000 |
| 5 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0116-0039-0005 | վարելահող | 0,09827 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 4000 |
| 6 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0116-0039-0006 | վարելահող | 0,05925 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 4000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0117-0026 | վարելահող | 2.49566 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 50000 |
| 8 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0117-0027 | վարելահող | 0.79929 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 16000 |
| 9 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0122-0008 | վարելահող | 0.89994 | IV | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 25000 |
| 10 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0123-0013 | վարելահող | 1.3551 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 18000 |
| 11 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0123-0016 | վարելահող | 0.82588 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 16000 |
| 12 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0127-0005 | վարելահող | 0.56713 | III | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 17000 |
| 13 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0127-0006 | վարելահող | 1.08751 | IV | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 19000 |
| 14 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0127-0007 | վարելահող | 0.17144 | IV | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 5000 |
| 15 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0127-0008 | վարելահող | 1.17054 | IV | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 21000 |

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավարի 2024 թվականի
Մարտի 19-ի թիվ 292-Ա որոշման

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանը հայտարարում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 15 կտոր հողերի վարձակալության մրցույթ:
Մրցույթը կկայանա 2024 թվականի ապրիլի 19-ին, ժամը 11:00-ին, Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, գյուղ Արևիկ, 8-րդ փողոց, շենք 24:
Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2024 թվականի ապրիլի 15-ը ներառյալ:
Հայտերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 13:00-ն, 14:00-ից 17:00-ն ներառյալ (Հայտերն ընդունվում են Արևիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում):
Մրցույթում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը:
Վարձակալության տրամադրվող հողերի նկարագիրը՝
Լոտերի թիվը՝ 15,
Հողերի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,
Վարձակալության տրամադրման ժամկետը՝ 10 տարի,
Մրցույթի ձևը՝ բաց,
Մրցույթի մասնակցության վճարի չափը՝ 2000 ՀՀ դրամ,
Նախավճարի չափը վարձավճարի մեկնարկային գնի նկատմամբ՝ 5%,
Քայլի չափը՝ վարձավճարի մեկնարկային գնի նկատմամբ՝ 5%

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի կադաստրային ծածկագիրը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողի որակական հատկանիշը | | Օգտագործման տրամադրման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը | Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հողի կարգ | Ջրովի/ անջրդի | | | |
| 1 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0116-0039-0001 | վարելահող | 0,17990 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 5000 |
| 2 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0116-0039-0002 | վարելահող | 0,12005 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 4000 |
| 3 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0116-0039-0003 | վարելահող | 0,09712 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 4000 |
| 4 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0116-0039-0004 | վարելահող | 0,10177 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 4000 |
| 5 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0116-0039-0005 | վարելահող | 0,09827 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 4000 |
| 6 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0116-0039-0006 | վարելահող | 0,05925 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 4000 |
| 7 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0117-0026 | վարելահող | 2.49566 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 50000 |
| 8 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0117-0027 | վարելահող | 0.79929 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 16000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0122-0008 | վարելահող | 0.89994 | IV | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 25000 |
| 10 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0123-0013 | վարելահող | 1.3551 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 18000 |
| 11 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0123-0016 | վարելահող | 0.82588 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 16000 |
| 12 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0127-0005 | վարելահող | 0.56713 | III | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 17000 |
| 13 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0127-0006 | վարելահող | 1.08751 | IV | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 19000 |
| 14 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0127-0007 | վարելահող | 0.17144 | IV | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 5000 |
| 15 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0127-0008 | վարելահող | 1.17054 | IV | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 21000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 293 -Ա

«12» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 45-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2024 թվականի փետրվարի 12-ի թիվ Կ-12022024-08-0034 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս գյուղի 3-րդ փողոց 50-րդ տուն հասցեի 08-037-0010-0012 կադաստրային ծածկագրով հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու մասին» թիվ 45-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

   1) որոշման տեքստում «Լուսվարդ Քերոբի Լալայանի, Արմենուհի, Գագիկ և Քրիստինե Մամփրեի Լալայանների անվամբ» բառերը փոխարինել «Լուսվարդ Քերոբի Լալայանի, Արմենուհի Մամպրեյի Ներսիսյանի, Գագիկ և Քրիստինե Մամփրեի Լալայանների անվամբ»» բառերով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«12» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 294 -Ա

«13» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-007-0968-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ 0,005655 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ, 28-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող 08-007-0968-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության 0,005655 հեկտար մակերեսով հատվածի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված 0,005655 հեկտար մակերեսով հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Պարույր Սևակի փողոց, 2/1 շինություն»:

3.Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
/փոխարինող/

«13» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 295 -Ա

«13» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-007-0968-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,005655 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ՋԻՎԱՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԴՐԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող, 08-007-0968-0001 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում գտնվող 0,005655 հեկտար մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում 2015-ից 2018 թվականներին ինքնակամ կառուցվել են հասարակական նշանակության մատուռ և բնակելի նշանակության պարիսպներ, որոնք մինչ օրս տիրապետում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան գյուղի բնակիչ՝ Արթուր Ջիվանի Մաթևոսյանը, ով 2024 թվականի մարտի 11-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարան դիմում է ներկայացրել ինքնակամ կառույցներն օրինականացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,005655 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված հասարակական նշանակության մատուռը և բնակելի նշանակության պարիսպները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին, որպես ինքնակամ կառույցներ հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024HSGEBN ծածկագրով, չեն գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, դրանք

կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կամ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ կետի և 15-րդ կետի բ) ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետական կամ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ, 3-րդ կետերի դրույթներով որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող, 08-007-0968-0001 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում գտնվող 0,005655 հեկտար մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 3,98 քառակուսի մետր արտաքին մակերեսով մատուռը և 8,65 քառակուսի մետր մակերեսով պարիսպները ճանաչել օրինական և դրանք համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող, 08-007-0968-0001 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում գտնվող 0,005655 հեկտար մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը թողնել բնակելի կառուցապատման:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունները և դրանցով զբաղեցված հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցներն իրականացրած անձին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան գյուղի բնակիչ՝ Արթուր Ջիվանի Մաթևոսյանին:
4. Անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականության իրավունքները ենթարկել պետական գրանցման:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ**
**/փոխարինող/**

«13» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 296-Ա

«14» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՌԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԷՏ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի «Խնամքի և սանիտարական հատումների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 897-Ն որոշման 47-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով էլեկտրական մալուխները անվտանգ անցկացնելու հանգամանքը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակավայրերում սանիտարական էտի մասին

Որոշում եմ՝

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակավայրերում ծառերի սանիտարական էտ իրականացնել՝ պահպանելով անվտանգության կանոնները:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին կատարել Ախուրյան համայնքի բնակավայրերում ծառերի սանիտարական էտի աշխատանքները:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքում սանիրատական էտի ենթարկած ծառերի ճյուղերը տրամադրել բնակավայրերի կարիքավոր ընտանիքներին և Արցախից բռնի տեղահանված ազգաբնակչությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
փոխարինող

14 մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2024 թվականի N 297-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 28-ՐԴ ՓՈՂՈՑ 30 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՄՍՈՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Վարուժան Սամսոնի Գրիգորյանը (ծնված 01/05/1960 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող 08-004-0123-0056 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից ավել օգտագործվող հողամասի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների դրույթներով և հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, դրա օգտագործումը չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք՝ որոշում եմ.

1. Ճանաչել քաղաքացի Վարուժան Սամսոնի Գրիգորյանի (ծնված 01/05/1960 թվական) սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի 28-րդ փողոց 30 հասցեում գտնվող, 08-004-0123-0056 կադաստրային ծածկագրով, 0,210451 հեկտար մակերեսով հողամասի սահմաններում ներառված ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

(Փոխարինող)

«14» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՐՏԻ 2024 ԹՎԱԿԱՆ N 298-Ա

Գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-077-0083-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի տարածքում գտնվող Սերգեյ Սուրենի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 08-077-0083-0026 կադաստրային ծածկագրով հողամասում առկա է բնակելի նշանակության ավտոտնակ: Գույքի սեփականատերը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարան դիմում է ներկայացրել հողամասի նպատակային նշանակությունը կառույցի նշանակությանը համապատասխանեցնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, Մայիսյան բնակավայրը ներառող, միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 08-077-0083-0026 կադաստրային ծածկագրով, քաղաքացու սեփականություն հանդիսացող 0,005551 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը նախատեսված է բնակավայրերի նշանակության և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի» 25-րդ կետի, 1-ին ենթակետի դրույթներով որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Մայիսյան բնակավայրի տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն

հանդիսացող 08-077-0083-0026 կադաստրային ծածկագրով 0,005551 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակություն:

2. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունը գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

(Փոխարինող)

«14» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 299 -Ա

«15» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂ ՀԱՑԻԿ 13 ՓՈՂՈՑ ՏՈՒՆ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,31837 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ԼԱՎՐԵՆԻԿԻ ՄՆՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍՍԻՆ

Քաղաքացի Տիգրան Լավրենիկի Մնոյանը դիմել է Ախուրյան համայնքի ղեկավարին /դիմումը մուտքագրվել է Ախուրյանի համայնքապետարանում 06.02.2024թ., թիվ 270/ համայնք Ախուրյան գյուղ Հացիկ, 13 փողոց, 14 տուն հասցեավորմամբ՝ 0,31837 հեկտար մակերեսով հողամասի և հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ 0,31837 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, տնատիրությունը կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոներին համապատասխան, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով՝ <<Իրավունք հաստատող փաստաթղթերը ճպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներով ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 13.11.2008 թվականի թիվ 1328-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>>

Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրութներով, որոշում եմ՝

1. Ճանաչել քաղաքացի Տիգրան Լավրենիկի Մնոյանի /ծնված՝ 20.11.1963թ./, սեփականության իրավունքը համայնք Ախուրյան գյուղ Հացիկ, 13 փողոց, 14 տուն հասցեավորմամբ՝ 0,2600 հեկտար մակերեսով հողամասի և հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված 359.95 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի նշանակության շինությունների նկատմամբ:
2. Սահմանված չափից ավել օգտագործվող՝ 0,058307 հեկտար մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Տիգրան Լավրենիկի Մնոյանին, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 300165,0 (երեք հարյուր հազար մեկ հարյուր վաթսուն հինգ) դրամ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ**
**/փոխարինող/**

«15» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան